

+

Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024 թվականի

հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն N°01-07/24:

Գիտական խորհրդի նախագահ,

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Մ. Գ. Բարսեղյան



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) «Հրդեհային անվտանգության ապահովման» կանոնակարգը նպատակաուղղված է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում հրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները կազմակերպելու և լիարժեք իրականացնելու նպատակով ստորաբաժանումների, պաշտոնատար անձանց, կազմավորումների, դասախոսական կազմի և ուսանողների գործողությունների կանոնակարգմանը:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի «Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և Հայաստանի հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի N 263-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 595-Ն հրամանը, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներն ու այլ իրավական ակտերը:

I. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

3. Ռեկտորի հրամանով համալսարանում, իսկ ստորաբաժանումներում համալսարանի՝ Մ.Արեղյանի անվան ավագ դպրոցի և միջին մասնագիտության կրթության քոլեջի, ղեկավարների կողմից նշանակվում են հրդեհային անվտանգության համար պատասխանատուներ, որոնք իրենց գործունեության ընթացքում կազմակերպում և վերահսկում են հրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

4. Առանձին տարածքների, շենքերի, շինությունների, արտադրամասերի, տեղամասերի, տեխնոլոգիական սարքավորումների և պրոցեսների, ինժեներական սարքավորումների հրդեհային անվտանգության համար պատասխանատվությունը համալսարանի ռեկտորի հրամանով կարող է դրվել այլ պաշտոնատար անձանց վրա:

II. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

5. Համալսարանի շենքերի ու շինությունների, դրանց մասերի կամ համալիրների կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման (ներառյալ՝ քանդման), արդիականացման նախագծերը համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ, իսկ աշխատանքների ընթացքում խստորեն պետք է պահպանվեն նորմատիվ փաստաթղթերով նախատեսված հրդեհային անվտանգության պահանջները:

6. Համալսարանի և ենթակա ստորաբաժանումների տարածքում ծխելը արգելվում է կամ թույլատրվում է միայն հատուկ սահմանված, նշագրված և կահավորված վայրերում: Առանձնացված ծխելու վայրերը պետք է կահավորվեն հրակայուն աղբամաններով ու ծխելը թույլատրող ցուցանակներով:

7. Շենքերում, շինություններում և բաց տարածքներում չի թույլատրվում՝

1) նկուղային և ցուկուղային հարկերում պահել և օգտագործել այրվող և դյուրավառ հեղուկներ, վառող, պայթուցիկ նյութեր, գազով բալոններ, աերոզոլային փաթեթավորումով ապրանքներ, ցելուլոզի և այլ պայթյունավտանգ նյութեր, բացառությամբ իրավական ակտերով նախատեսվածից ավելի քանակների.

2) աղբահեռացման հորաններում և աղբակուտակման խցերում աղբի ոչնչացումը այրման միջոցով.

3) հանել նախագծով նախատեսված նախասրահների, սրահների, միջանցքների, նախամուտքերի, սանդղավանդակների դռները.

4) կուտակել կահույք, սարքավորումներ և այլ իրեր՝ պատշգամբների և խորշապատշգամբների մուտքերի, կից բաժանմունքների, արտաքին տարահանման սանդուղքների դռների մոտ.

5) շենքերում տարածքների մաքրումը բենզինով, կերոսինով և այլ այրվող ու դյուրավառ հեղուկներով, ինչպես նաև սառած ջրմուղների տաքացումը զողման լամպերով և բաց կրակի օգտագործման այլ մեթոդներով.

6) տեղադրել ճաղավանդակներ լուսամուտների վրա (բացառությամբ պահեստներից, դրամարկղերից, հատուկ սենյակներից, ավտոտնակներից).

7) ապակեպատել հրդեհի դեպքում անվտանգության գոտիներին պատկանող խորշապատշգամբները և պատշգամբները.

8) սանդղավանդակներում և միջանցքներում ստեղծել պահեստանոցներ (խորդանոցներ), պահել կահույք, այրվող և դյուրավառ նյութեր՝ սանդղաբազուկների տակ և դրանց հարթակների վրա (սանդղաբազուկների տակ առաջին և ցուկուղային հարկերում թույլատրվում է տեղադրել միայն կենտրոնական ջեռուցման, ջրաչափիչների, էլեկտրավահանակների կառավարման հանգույցներ, որոնք պետք է մեկուսացված լինեն չայրվող միջնորմներով).

9) գործարկման ընթացքում վառարանային սարքերի, նավթավառների, կերոզազերի, պրիմուանների, լուսավորման լամպերի լցավորումը հեղուկ վառելանյութով.

10) կրակի հետ անզգույշ վարմունքը՝ անզգուշություն ծխելիս, հրդեհավտանգ աշխատանքներ կատարելը, բաց կրակից օգտվելը, ինչպես նաև կրակը առանց հսկողության թողնելը.

11) միմյանց հետ քիմիական փոխազդեցությամբ ինքնայրում առաջացնող նյութերի համատեղ պահումը, ինչպես նաև ջերմային կամ կենսաբանական ինքնայրման հակում ունեցող նյութերի պահում:

8. Շենքերի նկուղային և ցուցակային հարկերի լուսամուտային խորշերը պետք է կանոնավոր կերպով մաքրվեն աղբից: Նշված լուսամուտային խորշերը և պատուհանները չի թույլատրվում խուլ փակել:

9. Համալսարանի շինությունների էլեկտրականությունը պետք է սարքավորվեն և շահագործվեն ներկայացվող անվտանգության պահանջներին համապատասխան: Էլեկտրասարքավորումները պետք է միացվեն միայն անհրաժեշտության դեպքում, իսկ աշխատանքային օրվա ավարտին պետք է աշխատավայրերի սարքավորումները անջատվեն:

10. Էլեկտրասարքավորումների շահագործման ժամանակ չի թույլատրվում՝

1) օգտագործել սարքեր և սարքավորումներ, երբ շահագործման պայմանները չեն համապատասխանում արտադրող կազմակերպությունների երաշխիքներին, ինչպես նաև անսարքությունների դեպքում, որոնք կարող են հրդեհի պատճառ դառնալ.

2) շահագործել վնասված մեկուսացումով (մեկուսիչ հատկությունները կորցրած) մալուխներ և էլեկտրալարեր.

3) օգտվել անսարք վարդակներից, անջատիչներից և այլ տիպի էլեկտրական հարմարանքներից և սարքերից.

4) էլեկտրալամպերը կամ ջահերը փաթաթել թղթով կամ այլ այրվող նյութերով.

5) առանց չայրվող նյութից պատրաստված տակդիրի՝ օգտագործել էլեկտրական արդուկներ, սալօջախներ.

6) առանց հսկողության թողնել ցանցին միացված էլեկտրաջեռուցիչ սարքեր, հեռուստացույցներ, ռադիոընդունիչներ և այլ սպառիչներ, եթե դա արգելված է արտադրող կազմակերպության կողմից.

7) օգտագործել ոչ ստանդարտ (տնայնագործական) էլեկտրաջեռուցիչ սարքեր, ներդիրներ, այլ սարքեր՝ գերծանրաբեռնվածության և կարճ միացման հոսանքներից պաշտպանելու համար.

8) պահեստներով, արտադրական և այլ նշանակության շինություններով տարանցիկ հաղորդալարերի և մալուխների անցկացումը:

11. Հակահրդեհային ջրամատակարարման ցանցերը պետք է գտնվեն սարքին վիճակում և ապահովեն հակահրդեհային պահանջներով սահմանված, հրդեհաշիջման համար անհրաժեշտ ջրի ծախսը: Դրանց աշխատունակությունը պետք է ստուգվի ոչ պակաս, քան տարեկան երկու անգամ:

12. Հրշեջ ծորակները պետք է գտնվեն սարքին և մաքուր վիճակում:

13. Ջրամատակարարման ցանցի անջատման կամ ցանցում պահանջվող՝ 2.5 լ/վ ջրի ծավալի նվազեցման դեպքում անհրաժեշտ է այդ մասին հայտնել Համալսարանի տնտեսական վարչության պատասխանատուին:

14. Դեպի ջրաղբյուրներ և հրշեջ հիդրանտներ տանող ճանապարհներին պետք է տեղադրվեն համապատասխան ցուցատախտակներ (ծավալային լուսատուով, կամ հարթ լուսարտացուիչ ծածկույթով), որոնց վրա պետք է պարզ նշվի մինչև ջրաղբյուր եղած հեռավորությունը:

15. Հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ավտոմեքենաների անարգել մոտեցումը ապահովելու համար ջրաղբյուրների ու հրշեջ հիդրանտների ճանապարհները մշտապես պետք է պահվեն ազատ վիճակում:

16. Ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի ծորակները պետք է համալրված լինեն փողրակներով (ճկափողերով) և փողակներով: Հրշեջ փողրակը պետք է միացված լինի ծորակին և փողակին: Ոչ պակաս, քան 6 ամիսը մեկ անգամ կանեփաթելային փողրակները պետք է նոր ծալքով վերափաթաթվեն:

17. Պոմպակայանի շինության ներսում պետք է փակցված լինի հակահրդեհային ջրամատակարարման ընդհանուր սխեման՝ պոմպերի կապվածքով: Յուրաքանչյուր սողնակի և ջրի ճնշումը բարձրացնող պոմպի վրա պետք է նշված լինի դրանց նշանակումը: Ջրի ճնշումը բարձրացնող պոմպերը պետք է միացվեն ինքնաշխատ համակարգով:

18. Հրշեջ պոմպերի աշխատունակությունը պետք է ստուգվի ոչ պակաս, քան տարին երկու անգամ:

19. Հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեսակի և քանակության որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն այրվող նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունները, դրանց հարաբերությունը հրդեհաշիջման նյութերի հետ, ինչպես նաև արտադրական շինությունների, բաց հարթակների և սարքավորումների մակերեսները:

20. Հրշեջ վահանի լրակազմի մեջ մտնող ավազի տարողությունների ծավալը պետք է լինի 0.1 խոր.մ-ից ոչ պակաս: Արկղի կառուցվածքը պետք է ապահովի ավազի հեշտ դուրս բերումը, բացառի տեղումների ներթափանցումը:

21. Կրակմարիչներով համալրումը պետք է կատարվի սահմանված հրդեհային անվտանգության կանոնների համաձայն:

22. Հրդեհի համակցված օջախների հրդեհաշիջման համար կրակմարիչների ընտրության ժամանակ առավելությունը պետք է տրվի առավել համապիտանի կիրառման բնագավառ ունեցողներին:

23. Հրդեհի հնարավոր օջախից մինչև կրակմարիչի տեղադրման տեղը պետք է լինի ոչ ավել, քան 30 մետր:

24. Համալսարանի և ստորաբաժանումների տարացքում գտնվող հրդեհավտանգ, պայթյունավտանգ ու հրդեհապայթյունավտանգ կառույցների, շինությունների և համակարգերի, այդ թվում՝ թթվածնային կայանների, էներգետիկ կենտրոնի և այլն, նկատմամբ սահմանվում է հատուկ հսկողություն համաձայն դրանց վերաբերյալ առկա նորմատիվ պահանջների:

25. Այն շինություններում, որտեղ մեկ հարկում միաժամանակ գտնվում են 10 և ավելի մարդ, տեսանելի վայրերում փակցվում են հրդեհների ժամանակ դեպի ելք ցույց տվող

նշագծեր, սլաքներ, նախատեսվում են կայանքներ՝ հրդեհի դեպքում մարդկանց տեղեկացման համար:

26. Այն օբյեկտները, որտեղ միաժամանակ գտնվում են 50 և ավելի մարդ, նախատեսվում է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Պլանի համաձայն տարահանման աշխատանքներում ընդգրկված աշխատակիցների հետ պարբերաբար անց են կացվում մարզումներ (ուսումնավարժանքներ):

III. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

27. Համալսարանում հրդեհային անվտանգության ապահովման կազմակերպումն ու վերահսկողությունը իրականացվում է ՔՊ շտաբի կողմից:

28. ՔՊ շտաբը ամենօրյա գործունեության ժամանակ կազմակերպում և իրականացնում են հնարավոր հրդեհների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումներ՝

1) առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին ոլորտում տիրող իրավիճակի բարելավման ուղղությամբ,

2) պլանավորում և վերահսկում է հրդեհային անվտանգության ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումները,

3) կազմակերպում և իրականացնում է ղեկավար կազմի, անձնակազմի և ուսանողների նախապատրաստումը, այդ թվում տեսական ու գործնական պարապմունքների, ինչպես նաև ուսումնավարժությունների անցկացման միջոցով,

4) ոլորտի կարգավորման նպատակով՝ մշակում, համաձայնեցնում և ռեկտորի հաստատմանն է ներկայացնում համապատասխան հրամաններ ու կարգադրություններ,

5) ռեկտորի հանձնարարականով համագործակցում են շահագրգիռ մարմինների հետ,

6) ոլորտի կարգավորմանն ուղղված ենթակա ստորաբաժանումներում իրականացնում է Համալսարանի ռազմավարությունը և ստանում տեղեկատվություններ ու հաշվետվություններ,

7) ռեկտորի հանձնարարականով իրականացնում է ՔՊ շտաբի լիազորությունների շրջանակում այլ միջոցառումներ:

29. Զանգվածային միջոցառումներ անցկացնելուց առաջ հրդեհային անվտանգության պատասխանատուները ապահովում են անվտանգությանն ուղղված սահմանված պահանջները:

30. Ժամանակավոր կրակային և այլ հրդեհավտանգ աշխատանքներ կատարելուց առաջ, տեղեկացվում է հրդեհային անվտանգության պատասխանատուին և նրա ցուցումով ձեռնարկվում անվտանգության ապահովման կազմակերպման անհրաժեշտ միջոցառումներ:

31. Անձնակազմի նախապատրաստման նպատակով ՔՊ ու հրդեհային անվտանգության պատասխանատուները պարտավոր են՝

1) պարբերաբար և ըստ անհրաժեշտության անցկացնել աշխատակիցների հրդեհային անվտանգության հրահանգավորում.

2) կազմակերպել հրդեհի դեպքում մարդկանց տարահանման ուղիների պլանների (սխեմաների) մշակումը և համապատասխան վայրերում այդ պլանների տեղադրման աշխատանքները.

3) հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նպատակով մշակել և իրագործել միջոցառումներ (տարեկան հիմնական միջոցառումների պլան):

32. Հրդեհների կանխարգելման, ինչպես նաև դրանց մարման աշխատանքներին աշխատակիցների ներգրավման նպատակով ստեղծվում են հրդեհային պահպանության հասարակական կազմավորումներ:

33. Հրդեհային անվտանգության պատասխանատուների կողմից արտադրական, վարչական, պահեստային և օժանդակ շինությունների, ինչպես նաև կառուցվող օբյեկտների շինարարական հրապարակների տեսանելի վայրերում փակցվում են համապատասխան ցուցատախտակներ՝ «Հրդեհի դեպքում զանգահարել 911 հեռախոսահամարով»:

34. Բոլոր տեսակի կրակային, գազաեռակցման, էլեկտրատեռակցման, զոդման, մետաղի կտրման աշխատանքների ժամանակ մասնակիցները պարտավոր են ապահովել հրդեհային անվտանգության կանոնները: Այդ նպատակով՝

1) աշխատանքներից առաջ պատասխանատու նշանակված անձը պարտավոր է տեղեկացնել ՔՊ շտաբին, նշելով աշխատանքների նախատեսված ժամկետը, վայրը, բնույթը, ղեկավարի և իրականացնող անձնակազմի տվյալները,

2) ՔՊ շտաբը ստանալով տեղեկատվություն նախատեսված կրակային, գազաեռակցման, էլեկտրատեռակցման, զոդման, մետաղի կտրման աշխատանքների մասին իրականացնում է ղեկավարի և անձնակազմի հրահանգավորում և կազմակերպում աշխատանքների տեղամասերի հրդեհաշիջման սկզբնական միջոցներով (կրակմարիչ, ավազով արկղ, բահ և ջուր) ապահովումը,

3) պատասխանատու նշանակված անձը ՔՊ շտաբից՝ հրահանգավորման իրականացման և անվտանգության ապահովման մասին տեղեկատվություն ստանալուց հետո ձևակերպում է կարգագիր և սկսում աշխատանքները,

4) ՔՊ շտաբը վերահսկում է անվտանգության ապահովման միջոցառումները աշխատանքների ողջ ընթացքում, նաև պարբերաբար այցելությունների միջոցով,

5) աշխատանքների ընթացքում ՔՊ շտաբի կողմից հայտնաբերված անվտանգության կանոնների խախտումների դեպքում աշխատանքները անմիջապես դադարեցվում են մինչև դրանց վերացնելը, այդ մասին տեղեկացվում է պատասխանատու նշանակված անձին,

6) պատասխանատու նշանակված անձը խախտումները վերացնելուց հետո և նրա թույլատվությամբ վերսկսում աշխատանքները,

7) աշխատանքների ընթացքում հայտնաբերված խախտումների մասին զեկուցվում է ըստ վերադասության, անհրաժեշտ միջոցներ, այդ թվում նաև կարգապահական, կիրառելու համար:

IV. ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

35. Աշխատանքային օրերին հրդեհ հայտնաբերելու դեպքում աշխատողները և (կամ) ուսանողները պարտավոր են՝

1) անմիջապես դրա մասին հայտնել Համալսարանի ղեկավարությանը կամ անվտանգ գործունեության վարչության ղեկավարին կամ Համալսարանի քաղաքացիական պաշտպանության ղեկավարին կամ հերթապահ պահակին և տեղեկացնել « 911 » ծառայությանը.

2) անմիջապես կազմակերպել մարդկանց փրկելու և տարհանման աշխատանքները, եթե նրանց կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում,

3) դադարեցնել ուսումնական գործընթացները և բոլոր աշխատանքները Համալսարանում՝ բացի այն աշխատանքներից, որոնք կապված են հրդեհի վերացման միջոցառումների հետ,

4) մինչև հրշեջ փրկարարների ստորաբաժանումների ժամանումը կազմակերպել և իրականացնել հրդեհաշիջման աշխատանքներ (հաշվի առնելով առանձնահատկությունները), օգտագործելով հասանելի բոլոր առաջնային հրդեհաշիջման միջոցները՝ կրակմայրիչներն ու հրժեջ ծորակները,

5) կազմակերպել հրդեհի տարածումը և ծխապատումը կանխող և գույքի պահպանման միջոցառումներ,

6) ապահովել հրդեհաշիջման աշխատանքների մեջ ներգրավված համալսարանի աշխատողների անվտանգությունը:

36. Հրշեջ փրկարարական ստորաբաժանման ժամանումից հետո Համալսարանի ռեկտորը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է հրդեհաշիջման ստորաբաժանման ղեկավարին ներկայացնել օբյեկտի կառուցվածքային և տեխնոլոգիական առանձնահատկությունների, հարակից շենքերի, շինությունների, պահվող, օգտագործվող նյութերի, դրանց հրդեհավտանգ հատկությունների մասին տեղեկություններ, ինչպես նաև հաղորդել այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են հրդեհի հաջող վերացման համար:

37. Պահակային կետի հերթապահը պարտավոր է՝

ա) հրդեհ հայտնաբերելու դեպքում անմիջապես հայտնել «911» ծառայությանը և Համալսարանի ռեկտորին կամ նրան փոխարինող անձին՝ անվտանգ գործունեության վարչության ղեկավարին կամ քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին,

բ) մինչև հրշեջ փրկարարական ստորաբաժանումների ժամանումը իրականացնել հրդեհաշիջման աշխատանքների ապահովումը՝ ղեկավարվելով «911» ծառայության հրահանգավորմամբ և օգտագործելով առկա մարդկային ռեսուրսները, բոլոր առաջնային հրդեհաշիջման միջոցները,

գ) մինչև «911» ծառայության ժամանելը կազմակերպել Համալսարանում գտնվող բոլոր մարդկանց տարհանումը,

դ) կազմակերպել հրդեհի տարածումը, շինությունների ծխապատումը կանխող և գույքի պահպանման միջոցներ,

ե) կազմակերպել հրշեջ փրկարարական ստորաբաժանումների դիմավորումը և ապահովել հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավված Համալսարանի աշխատողների անվտանգության պահպանման պահանջների կատարումը:

V. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Կանոնակարգի պահանջների կատարման համար պատասխանատվություն է կրում Համալսարանի ողջ անձնակազմը՝ ըստ վերադասության:

39. Համալսարանի ենթակա ստորաբաժանումներում հրդեհային անվտանգության վերահսկողությունը իրականացնում է ստորաբաժանման ղեկավարը կամ նրա կողմից նշանակված անձը:

40. Համալսարանի ենթակա ստորաբաժանումներում հրդեհային անվտանգության միջոցառումների կազմակերպման և իրականացման ընդհանուր վերահսկողությունը իրականացնում է ՔՊ շտաբը:

41. ՔՊ շտաբը հրդեհային անվտանգության միջոցառումների վերահսկողության նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով իրականացնում է պլանային և արտապլանային աշխատանքներ, տալիս հանձնարարականներ և ստանում անհրաժեշտ տեղեկատվություն:

VI. ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

42. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

43. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով:

44. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում համալսարանի կայքում հրապարակվելուց հետո տասներորդ օրը:

45. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած համարել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի 2022 թվականի մարտի 29-ի որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի «Հրդեհային անվտանգության ապահովման կանոնակարգը»:

Գիտական քարտուղար

«10» հուլիսի 2024թ.

Գիտխորհրդի արձանագրություն №01-07/24



Է.Վ. Լևոնյան